

GOHAR POGHOSYAN
3rd year Bachelor, Department of Statistics

STATISTICAL STUDY OF THE PROGRESS OF REMITTANCES IN RA

Keywords: remittance, inflow, outflow, net inflow

The level of remittances varies from year to year depending on various factors such as economic conditions, employment opportunities and migration patterns. Moreover, in recent years, the volume of money transfers, especially to developing countries, has reached a record level, which has made this topic relevant.

This article, using statistical methods, presents the changes in the flow of remittances in RA and the possible reasons for these changes.

ՆՎԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ
*Հաշվապահական հաշվառում և հարկում,
բակալավիրիայ, 3-րդ կուրս*

**ՀՊՏՀ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմնաբառեր. ներքին վերահսկողության համակարգ,
վերահսկում, ռազմավարական նպատակ,
մոտիվացիա

Ներքին վերահսկողական համակարգը, համարվելով ռազմավարական ծրագրի իրականացումը, տեղեկատվական հոսքերի հուսալի, արժանահավաք, լիարժեք փոխանցումը, ռեսուրսների պարզաճ կառավարումը և կազմակերպության գործունեության ներքին իրավական ակտերին համապատասխանությունն ապահովող հիմնական գործիք, մեր ուսումնասիրության հիմնական առանցքն է: Այդ նպատակով ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ իրականացվել են անանուն հարցումներ և ուսումնասիրվել են ՀՊՏՀ ներքին իրավական կարգերն ու փաստաթղթերը: Աշխատակիցների վերահսկման օրինակը գործիք է, որի միջոցով գնահատել ենք ՀՊՏՀ ներքին վերահսկողության համակարգը:

Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՊՏՀ-ում առկա են ներքին վերահսկողական որոշակի խնդիրներ, որոնք առնչվում են ուսանողների կողմից գնահատման սուբյեկտիվությանը, Moodle և UMS համակարգերի կիրառման դժվարություններին:

Առաջարկվել է փոփոխել ուսանողների կողմից դասախոսներին գնահատելու կարգը և UMS ու Moodle համակարգերի շնորհիվ ապահովել մեկ միասնական հարթակի գործունեությունը, որով կգործարկվեն տեղեկատվական հոսքերը:

Ներածություն: Կազմակերպության ռեսուրսների արդյունավետ կառավարման, նվազագույն ծախսերով հնարավոր առավելագույն արդյունք ստանալու ու ռազմավարական նպատակներին հասնելու համար կարևոր է յուրաքանչյուր օղակի արդյունավետ կառավարումը:

ՀՊՏՀ ռազմավարական նպատակների իրագործումն ապահովելու համար անհրաժեշտ է.

- աշխատակիցներին փոխանցել այն գաղափարը, որ ազնվության ու էթիկական արժեքների պահպանումը գերակա է ու պարտադիր անհրաժեշտություն,
- տիրապետել վարվեցողության կանոններին, որոնք կանդրադառնան շահերի բախման, հակամարտությունների վերահսկման, էթիկական ու բարոյական արժեքների վրա,
- ձևավորել աշխատանքի ընդունման, աշխատակիցների վերապատրաստման, առաջխաղացման ու վճարման հստակ քաղաքականություն, աշխատակիցներին տեղեկացնել իրենց պարտականությունների ու անելիքների մասին, հաստատագրված քաղաքականության ու ընթացակարգերից շեղման դեպքում ձեռնարկել ուղղիչ գործողություններ, մշակել վարքագծի ուղեցույցներ ու ներկայացնել աշխատակիցներին,
- ապահովել տեղեկատվական հոսքերը ու հաղորդակցումը կազմակերպության տարբեր օղակներում:

ՀՊՏՀ-ում աշխատակիցների աշխատանքի ապահովման հիմնական նպատակները ներկայացված են ՀՊՏՀ ռազմավարությունում: Այդ նպատակներն ապահովվում են գործող կարգերով, սակայն որոշակի թերություններ են առկա՝ կապված աշխատակիցների վերահսկման գործիքների ու տեղեկատվական հոսքերի ապահովման ու հաղորդակցման գործընթացների արդյունավետության հետ, որոնց անդրադարձել ենք հոդվածում:

Գրականության ակնարկ: Ներքին վերահսկողության համակարգը, յուրահատուկ գործիք լինելով կազմակերպության դինամիկ զարգացումն ապահովելու ու ռազմավարական նպատակների իրականացման գործընթացում, մշտապես ուսումնասիրվել է հետազոտողների կողմից:

COSO-ի (Հովանավոր կազմակերպությունների կոմիտե) հայեցակարգում նշվում է, որ ներքին վերահսկողությունը կազմակերպություններին օգնում է հասնել ռազմավարական նպատակներին և բարելավել ու կայունացնել կազմակերպության գործունեությունը¹: Ներքին վերահսկողության գործընթացը, ըստ այս հայեցակարգի, ներառում է հետևյալ բաղադրատարրերը, որոնք թույլ են տալիս կազմակերպության գործընթացներն ամբողջությամբ վերահսկել.

- վերահսկման միջավայր
- ռիսկերի գնահատում
- վերահսկիչ գործունեություն
- տեղեկատվություն և հաղորդակցություն
- մշտադիտարկում

Աննա Բայադյանը նշում է, որ յուրաքանչյուր կազմակերպություն ներքին վերահսկողության գործընթացը կազմակերպելիս հիմք է ընդունում իր կազմակերպատիրական ձևի առանձնահատկությունները, կազմակերպության ծավալները, գործունեության ուղղվածությունը, ներքին վերահսկողության նպատակներին համահունչ գործառնությունների պլանավորումը և այլն: Հետազոտողը եզրահանգում է՝ նշելով, որ ներքին վերահսկողության համակարգը

¹ St'u Internal control – Integrated Framework executive summary, The Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission, May 2013, էջ 1, <https://www.coso.org/Shared%20Documents/Framework-Executive-Summary.pdf>

կազմակերպության արդյունավետ աշխատանքով հետաքրքրված ղեկավարների կողմից կիրառվող ընթացակարգերի համախումբ է՝ ֆինանսատնտեսական գործունեությունը պատշաճ կերպով և կանոնակարգված իրականացնելու համար¹:

Սեմմի Ֆունգը և Մեթյու Լին ընդգծում են, որ ներքին վերահսկողության առողջ համակարգը ոչ միայն օգնում է կազմակերպություններին կատարել իրենց պարտավորությունները, այլ նաև երաշխավորում է կազմակերպություններին՝ հասնելու իրենց ռազմավարական նպատակներին ու նվազեցնելու ֆինանսական ռիսկերը՝ ներքին ու արտաքին ռիսկերին, ծախսողումներին ու թերացումներին ժամանակին արձագանքելու շնորհիվ²:

Ըստ Վալցլավ Լակիսի և Լուկաս Գիրյունասի՝ միայն արդյունավետ ներքին վերահսկողությունը կարող է կազմակերպություններին օգնել օբյեկտիվորեն գնահատել կազմակերպության գործունեության զարգացման հեռանկարները և միտումները: Դրա շնորհիվ հնարավոր կլինի ժամանակին հայտնաբերել ու վերացնել սպառնալիքները և ռիսկերը՝ ապահովելով կազմակերպության կայունությունը³:

ԱՍ 400 «Ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը» ստանդարտի «Ներքին վերահսկողության համակարգը» կազմակերպության ղեկավարության կողմից որդեգրված քաղաքականությունն ու ընթացակարգերն են (ներքին վերահսկողությունը): Դրանք օժանդակում են ղեկավարությանը՝ իր նպատակներին հասնելու գործում, մասնավորապես՝ կազմակերպության տնտեսական գործունեությունն արդյունավետ և պատշաճ կազմակերպելու (ներառյալ ղեկավարության որդեգրած քաղաքականությանը հավատարիմ լինելու), ակտիվների պահպանման, խարդախության և սխալների կանխարգելման ու հայտնաբերման, հաշվապահական հաշվառման գրանցումների ճշգրիտ և ամբողջական վարման, ինչպես նաև անհրաժեշտ ժամանակաշրջանի ընթացքում հավաստի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման արժանահավատության նպատակով: Այն ընդգրկում է վերահսկողական միջավայրը, որը մեծ ազդեցություն ունի վերահսկողական գործընթացների վրա, և վերահսկողական ընթացակարգերը⁴:

Ներքին վերահսկողությունը գործընթացների ամբողջություն է, որն իրականացվում է կազմակերպության ղեկավարության ու անձնակազմի կողմից և ուղղված է ռիսկերը կանխելուն և ողջամիտ երաշխիքներ տրամադրելուն: Կազմակերպության առաքելությունն իրականացնելիս իրագործվում են հետևյալ նպատակները՝

¹ Տե՛ս «Ներքին վերահսկողական համակարգի կառուցվածքն ու իրականացման ընթացակարգերի կատարելագործումը», Աննա Բայադյան, Բանբեր ՀՊՏՀ, 2021(3), էջ 59-70:

² Տե՛ս Internal Control Review: The Practical Approach, by Sammy Fung and Matthew Lee, University of Hong Kong, September 16, 2019, էջ 1, <https://store.hbr.org/product/internal-control-review-the-practical-approach/HK1210>

³ Տե՛ս THE Concept of Internal Control System: Theoretical Aspect, Vaclovas Lakis, Lukas Giriūnas, ISSN 1392-1258. ekonomika 2012, Vol. 91(2), https://www.researchgate.net/publication/330519076_THE_CONCEPT_OF_INTERNAL_CONTROL_SYSTEM_THEORETICAL_ASPECT

⁴ Տե՛ս ԱՍ 400, Ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=13686>

- գործընթացների՝ կանոնավոր, էթիկայի նորմերին համապատասխան, տնտեսապես հիմնավորված և արդյունավետ իրականացում,
- պարտականությունների՝ հաշվետվողականորեն կատարում,
- գործող օրենքների ու կանոնակարգերի պահպանում,
- ռեսուրսների պաշտպանություն կորստից, չարաշահումից ու վնասից¹:

Հայրենական և օտարերկրյա հետազոտողների մոտեցումները թույլ են տալիս ձևավորել սեփական տեսակետը ներքին վերահսկողության համակարգի բոլոր գործընթացների մասին:

Հետազոտության մեթոդաբանություն: Սույն հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել մասնագիտական գրականության՝ արտերկրի աղբյուրները, հայ հետազոտողների ուսումնասիրությունները, Հայաստանում ներքին վերահսկողական համակարգը կարգավորող ստանդարտները, COSO-ի հայեցակարգը, ՀՊՏՀ կայքէջի տեղեկատվությունն ու սեփական հետազոտությունները:

Վերլուծություն, հետազոտության արդյունքներ և քննարկում: ՀՊՏՀ աշխատակիցների վերահսկողության գործիքների միջոցով հետազոտվել է ՀՊՏՀ ներքին վերահսկողության համակարգը. ՀՊՏՀ աշխատակիցների կազմը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Հետազոտությունն իրականացնելիս ՀՊՏՀ դասախոսների համար Google form-ի տեսքով կազմվել էր 17 հարցից բաղկացած հարցաթերթիկ՝ ՀՊՏՀ ներքին վերահսկողական համակարգի մասին, որը լրացրել են 69 դասախոսներ՝ 19 ամբիոններից²:

Աղյուսակ 1

ՀՊՏՀ դասախոսական և վարչական անձնակազմեր³

Պաշտոնը/կոչումը	Քանակը	Այդ թվում՝ վարչական համապետողներ
Հիմնական		
Պրոֆեսոր	18	3
Դոցենտ	158	20
Ավագ դասախոս	29	-
Դասախոս	76	11
Ասիստենտ	32	4
Վարչական աշխատողներ	248	-
Ընդամենը	561	38
Համատեղությամբ և ժամավճարով աշխատողներ		
Պրոֆեսոր	2	4
Դոցենտ	16	11
Ավագ դասախոս	13	1
Դասախոս	41	29
Ասիստենտ	8	20
Վարչական աշխատողներ	3	-
Ընդամենը	83	65


¹ St'u Guidelines for Internal Control Standards for the Public Sector. INTOSAI, 1992, էջ 7, https://www.issai.org/wp-content/uploads/2019/08/intosai_gov_9100_e.pdf

² <https://forms.gle/viW7kNq2qNCtFhDA>

³ Տե՛ս ՀՊՏՀ 2022 թ. գործունեության տարեկան հաշվետվություն, <https://asue.am/upload/files/reports/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%202022.pdf>

Հարց 1-ին


Համալսարանում գործող վերահսկողական գործիքներից ո՞րն է առավել արդյունավետ:



Գծապատկեր 1. 1-ին հարցի արդյունքները

Հարց 2-րդ

Ուսանողների կողմից դասախոսների գնահատումը, որպես վերահսկողական գործիք, ինչպե՞ս է անդրադառնում աշխատանքային գործընթացի վրա:



Գծապատկեր 2. 2-րդ հարցի արդյունքները


Դասախոսները հնարավորություն ունենին ավելացնելու նաև իրենց տարբերակները, որոնցում նրանք արտահայտել են հետևյալ կարծիքները՝

- Խնդիրը գնահատման օբյեկտիվությունը պահպանելու մեջ է: Ուսանողների կողմից դասախոսների գնահատման համար որոշիչ է կիսամյակի ընթացքում դասախոսի կողմից բարձր գնահատականներ «շոայլելը», ինչն օբյեկտիվ և կառուցողական չէ, առաջին հերթին, հենց ուսանողների համար: Առավել խստապահանջ դասախոսները, որոնք դասապրոցեսի կազմակերպման ընթացքում առավել խիստ ու պահանջկոլ մոտեցում ունեն ուսանողների նկատմամբ՝ դրանով իսկ գիտելիքի փոխանցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելով, երբեմն ավելի ցածր գնահատականի են արժանանում:

- Ուսանողների կողմից գնահատմանը մասնակցության ցածր մակարդակը թույլ չի տալիս գնահատումը օբյեկտիվ համարել:
- Դրանք ոչ ամբողջական են և սուբյեկտիվ:

Հարց 3-րդ

Ուսանողների կողմից դասախոսների գնահատումը, որպես վերահսկողական գործիք, ինչպե՞ս է անդրադառնում գնահատման գործընթացի վրա:




Գծապատկեր 3. 3-րդ հարցի արդյունքները

- 40% - Նպաստում է դասախոսների կողմից պատասխանատու մոտեցման ձևավորմանը:
- 23% - Ազդեցություն չի ունենում:
- 15% - Նվազեցնում է գնահատման անաչառությունը:
- 10% - Հանգեցնում է ուսանողների նկատմամբ կախվածության ձևավորմանը:
- 7% - Հանգեցնում է դասախոսների հանդեպ վերաբերմունքի փոփոխությանը:
- 5% - Հանգեցնում է ուսանողների հանդեպ վերաբերմունքի փոփոխությանը:

Հարց 4-րդ


Ինչպե՞ս կգնահատեք ուսանողների կողմից գնահատման անաչառությունը:



Գծապատկեր 4. 4-րդ հարցի արդյունքները

- Դասախոսները հնարավորություն ունենին ավելացնելու նաև իրենց տարբերակները, որոնցում նրանք արտահայտել են հետևյալ կարծիքները՝
- Առավել հաճախ գնահատում են այն ուսանողները, որոնք դժգոհություններ ունեն հատկապես գնահատականից, այլ ոչ թե դասախոսի փոխանցած իրական գիտելիքներից: Իսկ առավել պարտաճանաչ ու գիտելիքը գնահատող ուսանողներն ավելի պասիվ են: Վերոնշյալը խեղաթյուրում է իրական պատկերը: Ցանկալի կլինի, որ ուսանողները գնահատեն քննություններից առաջ, ու քննությանը մասնակցելու համար գնահատումը լինի պարտադիր պայման:
 - Գնահատումը պետք է նախորդի քննաշրջանին, որ հնարավորինս օբյեկտիվ լինի:


Հարց 5-րդ
Ինչպե՞ս եք գնահատում կազմակերպական ու նյութատեխնիկական պայմանների առկայությունը մասնագիտական գործունեության կազմակերպման համար:




Գծապատկեր 5. 5-րդ հարցի արդյունքները

- 70% - Առկա պայմանները մասամբ բավարարում են:
 - 23% - Առկա պայմաններն ամբողջապես բավարարում են:
 - 7% - Առկա պայմանները չեն բավարարում:
- Դասախոսները նշում են, որ հիմնական խնդիրը վերաբերում է համակարգչային տեխնիկայով, ինտերնետ կապով հագեցած լսարանների, ինչպես նաև ամբիոնների բացակայությանը:

Հարց 6-րդ
Moodle համակարգի կիրառումը նպաստո՞ւմ է տեղեկատվությունն ամբողջական ու համալիր կերպով ուսանողներին փոխանցելուն:




Գծապատկեր 6. 6-րդ հարցի արդյունքները



Գծապատկեր 7. ՀՊՏՀ դասախոս օգտատերերի հանրագումարային մուտքը Moodle հարթակ 2020-2022 թթ. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին¹

Հարց 7-րդ

Moodle և UMS համակարգերի գործարկումից առաջ, համակարգերի անխափան ներդրման համար ներկայացվել են օգտագործման եղանակ-ները:




Գծապատկեր 8. 7-րդ հարցի արդյունքները

- 53% - Մասամբ ներկայացվել են:
- 37% - Այո, իրականացվել են վերապատրաստման դասընթացներ:
- 7% - Տեղյակ չեմ:
- 3% - Ոչ, չեն ներկայացվել օգտագործման եղանակները:

Հարց 8-րդ

Ինչպե՞ս կգնահատեք UMS համակարգի ու մատյանների միաժամա-նակյա կիրառումը վերահսկման գործընթացում:

¹ Տե՛ս ՀՊՏՀ 2020 թ. գործունեության տարեկան հաշվետվություն,
<https://asue.am/upload/files/reports/report-2020.pdf>
Տե՛ս ՀՊՏՀ 2021 թ. գործունեության տարեկան հաշվետվություն,
<https://asue.am/upload/files/reports/%D5%80%D5%8A%D5%8F%D5%80%202021%20%D5%A9.%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>
Տե՛ս ՀՊՏՀ 2022 թ. գործունեության տարեկան հաշվետվություն,
<https://asue.am/upload/files/reports/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%202022.pdf>




Գծապատկեր 9. 8-րդ հարցի արդյունքները

- 57% - Մասամբ դժվարացնում է դասախոսի աշխատանքը:
- 27% - Նպաստում է վերահսկման մակարդակի բարձրացմանը:
- 13% - Մասամբ դյուրացնում է դասախոսի աշխատանքը:
- 3% - Ազդեցություն չի ունենում:

Դասախոսների կողմից նշվում է, որ հիմնական դժվարությունները կապված են UMS համակարգի խափանումների հետ:

Հարց 9-րդ


Ինչպե՞ս կգնահատեք ակադեմիական կազմի պաշտոնների տեղակալման ընտրությունների փակ գաղտնի քվեարկության կարգը:



Գծապատկեր 10. 9-րդ հարցի արդյունքները

Հարց 10-րդ

Համալսարանի տարածք մուտք գործելու քարտային համակարգը արդյո՞ք արդյունավետ գործիք է՝ դասախոսների աշխատանքի ներկայանալը վերահսկելու համար:




Գծապատկեր 11. 10-րդ հարցի արդյունքները

- 49% - Ամբողջությամբ արդյունավետ է:
- 36% - Մասամբ է նպաստում՝ լիարժեքորեն չկիրառվելու հետևանքով:
- 10% - Դժվարություններ է ստեղծում՝ առաջացնելով լարվածություն:
- 5% - Արդյունավետ չէ:

Հարց 11-րդ

Աշխատակիցների խրախուսման կարգն ինչպե՞ս է անդրադառնում Ձեր աշխատանքային պարտականությունների կատարման վրա:




Գծապատկեր 12. 11-րդ հարցի արդյունքները

- 69% - Մոտիվացնում է՝ անաչառ լինելու շնորհիվ:
- 24% - Ազդեցություն չի ունենում:
- 4% - Դեմոտիվացնում է՝ անաչառ չլինելու պատճառով:
- 3% - Ծանոթ չեմ կարգին:

Հարց 12-րդ


Մասնագիտական ամբիոնի կազմի և դեկանների հետ ի՞նչ պարբերականությամբ են տեղի ունենում քննարկում-հանդիպումներ՝ առկա հիմնախնդիրները վերլուծելու և շտկելու ուղղությամբ:



Գծապատկեր 13. 12-րդ հարցի արդյունքները

Հարց 13-րդ

Որքանո՞վ եք ներգրավված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և բարելավման փուլերում:




Գծապատկեր 14. 13-րդ հարցի արդյունքները

- 44% - Մասամբ եմ ներգրավված:
- 39% - Ամբողջությամբ ներգրավված եմ:
- 11% - Ներգրավված եմ:
- 6% - Ներգրավված չեմ:

Հարց 14-րդ

Ուսումնասիրե՞լ եք արդյոք համալսարանի նոր ռազմավարությունը, մասնակցե՞լ եք այն մշակելու աշխատանքներին ու քննարկումներին:




Գծապատկեր 15. 14-րդ հարցի արդյունքները

- 58.8% - Մասնակցել եմ քննարկումներին:
- 27.9% - Ուսումնասիրել եմ մասամբ:
- 10.3% - Մասնակցել եմ քննարկումներին ու մշակման աշխատանքներին:
- 5.9% - Չեմ ուսումնասիրել:

Հարց 15-րդ

Համալսարանի ներքին իրավական կարգերը ու փաստաթղթերը որքանո՞վ են նպաստում համալսարանում վերահսկողական ու ներքին կարգավորման գործընթացներին:




Գծապատկեր 16. 15-րդ հարցի արդյունքները

2020-2022 թթ. մշակվել և կիրառության մեջ են դրվել համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված մի շարք կարգեր, մասնավորապես՝

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման կանոնակարգ»,
2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգ»,
3. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներքին կարգապահական կանոններ»,
4. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի աշխատողների խրախուսման կարգ»,
5. «Ակադեմիական կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանշավորման կարգ»,
6. «ՀՊՏՀ սկսնակ դասախոսների մենթորության կազմակերպման կարգ»,
7. «ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կրթական ծրագրերով հաստատված ուսանողների փորձառության կազմակերպման, անցկացման և ամփոփման կարգ»,
8. «Դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցման անցկացման ընթացակարգ»,
9. «Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՀՊՏՀ ծրագիր»:

Հարց 16-րդ

Ինչպե՞ս կգնահատեք համալսարանում գործող ներքին վերահսկողական գործընթացները և տեղեկատվական հոսքերը:



Գծապատկեր 17. 16-րդ հարցի արդյունքները

17-րդ հարցի պատասխանները ազատ շարադրանք են (նշումներով):

Եզրակացություն: Այսպիսով, ներքին վերահսկողության համակարգի ամբողջական կիրառումը կազմակերպությանը հնարավորություն է տալիս ապահովելու ռազմավարական նպատակների իրագործումը, իսկ վերահսկողական խնդիրների ժամանակին հայտնաբերումը նպաստում է ռիսկերի կանխմանը, համապատասխան շտկումների ժամանակին իրականացմանը ու կազմակերպության կայունության ապահովմանը:

ՀՊՏՀ կազմակերպական հատվածի ներքին վերահսկողական համակարգն ուսումնասիրվել է ըստ COSO-ի հայեցակարգի: Հետազոտվել են ՀՊՏՀ վերահսկողական միջավայրը, կազմակերպական ռիսկերը, վերահսկիչ գործունեությունը, տեղեկատվական հոսքերը և հաղորդակցությունը, մշտադիտարկումը:

Հարցաշարն ըստ COSO-ի հայեցակարգի ամփոփելով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որը ՀՊՏՀ-ում թեպետ կիրառվում են վերահսկողական մի շարք գործիքներ, կարգավորող ներքին իրավական ակտեր, որոնք կազմակերպում են գործընթացները, սակայն գործող համակարգերի արդյունավետության տեսանկյունից առկա են հիմնախնդիրներ, մասնավորապես՝

- ուսանողների կողմից գնահատումների կիրառումը մասամբ սուբյեկտիվ է,
- համակարգչային տեխնիկայով ու ինտերնետով լսարանների ոչ ամբողջական ապահովվածությունը,
- UMS համակարգի ու մատյանների միաժամանակյա կիրառման և UMS համակարգի տեխնիկական խափանումների առաջացրած դժվարությունները,
- Moodle և UMS համակարգերի օգտագործման հետ կապված դժվարությունները,
- թվային ենթակառուցվածքների արդիականացումը և ինտեգրումը մեկ համակարգում, որի բացակայության հետևանքով տեղեկատվությունը ճշգրիտ կամ ժամանակին չի մուտքագրվում տեղեկատվական համակարգ,
- ակադեմիական կազմի պաշտոնների տեղակալման ընտրությունների փակ գաղտնի քվեարկության կարգում որոշակի սուբյեկտիվության տարրի առկայությունը,
- համալսարանի տարածքում քարտային համակարգի ոչ լիարժեք կիրառումը,
- նոր ռազմավարության մշակման, քննարկման աշխատանքներում ոչ բոլոր դասախոսների ներգրավվածությունը,
- համալսարանում գործող ներքին վերահսկողական գործընթացների և տեղեկատվական հոսքերի ոչ լիարժեքությունը:

Այս ամենը վկայում է ՀՊՏՀ-ում վերահսկիչ գործունեության ու տեղեկատվական հոսունության հիմնախնդիրների մասին, որոնց լուծման համար առաջարկում ենք.

1. Ուսանողների կողմից դասախոսների գնահատման գործիքը կիրառել քննություններից առաջ և ապահովել գնահատումների հիմնավորվածությունը:
2. Կիրառել միայն UMS համակարգ և ապահովել տեխնիկական խնդիրների լուծումը:
3. Անցակետերի փոխարեն դասապրոցեսի սկզբին դասախոսների կողմից ապահովել մուտքը UMS համակարգ, որը կարձանագրվի համակարգի միջոցով՝ ապահովելով դասախոսների ներկայության վերահսկողությունը:
4. UMS ու Moodle համակարգերի միասնականությամբ ապահովել ուսանողների մուտքը UMS համակարգ:
5. Գործող ներքին իրավական ակտերը և նոր ռազմավարությունը քննարկել ամբիոններում՝ ապահովելով դասախոսական ամբողջ կազմի տեղեկացվածությունը համալսարանի գործընթացներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՊՏՀ զարգացման ռազմավարություն– 2022-2027:
2. Բաբայան Վ., «Բանկային աուդիտի հիմնախնդիրները» առարկայի դասախոսության տեքստ,
https://moodle.asue.am/pluginfile.php/296518/mod_resource/content/1/%D4%B4%D5%A1%D5%BD%D5%A1%D5%AD%D5%B8%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BF%D5%A5%D6%84%D5%BD%D5%BF%20-%20%D4%B9%D5%A5%D5%B4%D5%A1%202.pdf
3. Բալայան Ա., Ներքին վերահսկողական համակարգի կառուցվածքն ու իրականացման ընթացակարգերի կատարելագործումը, Բանբեր ՀՊՏՀ, 2021(3):
4. ՀՊՏՀ 2020 թ. գործունեության տարեկան հաշվետվություն,
5. <https://asue.am/upload/files/reports/report-2020.pdf>
6. ՀՊՏՀ 2021 թ. գործունեության տարեկան հաշվետվություն,
7. <https://asue.am/upload/files/reports/%D5%80%D5%8A%D5%8F%D5%80%202021%20%D5%A9.%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>
8. ՀՊՏՀ 2022 թ. գործունեության տարեկան հաշվետվություն:
9. ԱՍ 400, դիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=13686>
10. Internal Control – Integrated Framework, The Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission, 1992, <https://www.coso.org/SitePages/Guidance.aspx>
11. Internal control – Integrated Framework executive summary, The Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission, May 2013,
<https://www.coso.org/Shared%20Documents/Framework-Executive-Summary.pdf>
12. Guidelines for Internal Control Standards for the Public Sector. INTOSAI,
https://www.issai.org/wp-content/uploads/2019/08/intosai_gov_9100_e.pdf
13. Internal Control Review: The Practical Approach, by Sammy Fung and Matthew Lee, University of Hong Kong, September 16, 2019,
<https://store.hbr.org/product/internal-control-review-the-practical-approach/HK1210>
14. The Concept of Internal Control System: Theoretical Aspect, Vaclovas Lakis, Lukas Giriūnas, ISSN 1392-1258. Ekonomika, 2012, Vol. 91(2),
https://www.researchgate.net/publication/330519076_THE_CONCEPT_OF_INTERNAL_CONTROL_SYSTEM_THEORETICAL_ASPECT
15. <https://asue.am/upload/files/reports/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%202022.pdf>
16. <https://asue.am/am/asue/documents/orders/EMPLOYEES>
17. <https://asue.am/am/asue/documents/orders/-scientific-methodological-activity>
18. <https://asue.am/am/asue/documents/orders/-elective-positions>
19. <https://audit.ucsf.edu/internal-controls#:~:text=Internal%20control%20is%20a%20process,regulations%2C%20contracts%2C%20policies%20and%20procedures>
20. <https://www.techtarget.com/searchcio/definition/COSO-Framework>

НВАРД ПОГОСЯН

*Бухгалтерский учет и налогообложение,
бакалавриат, 3-й курс*

ПРОБЛЕМЫ в СИСТЕМЕ ВНУТРЕННЕГО КОНТРОЛЯ АГЭУ

Ключевые слова: *система внутреннего контроля,
контроль, стратегическая цель,
мотивация*

Система внутреннего контроля, считающаяся основным инструментом реализации стратегического плана, обеспечивающая надежную, достоверную, полную передачу информационных потоков, надлежащее управление ресурсами и соблюдение внутренних правовых актов организации, является основным направлением деятельности нашего исследования.

С этой целью были проведены анонимные опросы профессорско-преподавательского состава АГЭУ, изучены внутренние правовые акты и документы АГЭУ. Модель контроля сотрудников - инструмент, с помощью которого мы оценили систему внутреннего контроля АГЭУ.

В результате исследования выяснилось, что в АГЭУ существуют определенные проблемы внутреннего контроля, которые связаны с субъективностью оценки студентов, сложностями использования систем Moodle и UMS.

Предлагается изменить порядок оценки преподавателей студентами и благодаря системам UMS и Moodle обеспечить запуск единой платформы для реализации информационных потоков.

NVARD POGHOSYAN

*3rd year Bachelor, Department of
Accounting and Auding*

THE ISSUES OF THE INTERNAL CONTROL SYSTEM OF ASUE

Keywords: *internal control system, control, strategic
goal, motivation*

The present article studies the internal control system, which is considered the main tool for the implementation of the strategic plan, ensuring the reliable, credible, full transfer of information flows, the proper management of resources and compliance with the internal legal acts of the organization.

For the purpose of the study, anonymous surveys were conducted with the academic staff of ASUE and the internal legal regulations and documents of ASUE were studied. The example of employee control is a tool through which we evaluated the internal control system of ASUE.

As a result of the research, it became obvious that there are certain internal control problems in ASUE, which are related to the subjectivity of students' assessment, and difficulties in using Moodle and UMS systems.

It was proposed to change the procedure of evaluation by students to professors and due to ensuring the unity of UMS and Moodle systems, to ensure the launch of a single platform for the implementation of information flows.